

ՀԱՅԻՍՏԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 5-ին, կիրակի.—Ե կիրակի Քառամորդական պահոց (Տեսևսին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատոցում տ. Հովհաննես քին. Մարտրյանը, իսկ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Վարդան արեղա «Իմանաբն» «Տոր զիամար տնտեսութեան Բոյ» (Ղուկ. ժԶ 2) քնարակով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյն օրը, Վեհափառ Հայրապետի հրավերով, ոխառավորաբար Բուենոս-Այրեսից, Բեյրութի վրայում, Մայր Աթոռ է ժամանում Հայրապահին Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բարգեն արքեպ. Ապառալանը:

Օդանավակայանում սրբազնին դիմավորում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հովհաննես և պատուի Ամերիկանը, տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, տ. Վարդան արեղա «Իմանաբն», տ. Մասին արեղա Գալստյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար Պարգև Ծամբագյանը:

Տ. Բարգեն արքեպ. Ապառալանը, Մայր տաճարում իր աղոթքն ու ոխառ կատարելուց հետո, ներկարանում է Վեհափառ Հայրապետին:

* * *

Մարտի 9-ին, կիրակի.—Ե կիրակի Քառամորդական պահոց (Դատաւորին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատոցում տ. Հակոբ քին. Հակոբյանը, իսկ քարոզում է տ. Հովհանն արեղա Հակոբյանը՝ «Բախչեցէք և բացցի ձեզ, խնդրեցէք և տացի ձեզ» (Ղուկ. ժԱ 9) քնարակով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Բոլոր ներկաները աշամասրույթով ստանում են Հայոց Հայրապետի օրինությունը:

Նորին Սրբությունը սիրով ողջունում է ներկայությունը Արքարատյան թեմի հոգևորական և աշխարհական ներկայացույցիների, մետաքրքրվում թեմի եկեղեցական հարցերով և իր հայրապետական շերտ ցանկությունը հայտնում Երևանի երեք եկեղեցիներ՝ ս. Սարգսի, ս. Հովհաննեսը և ս. Չորավորը, տեսնել ավելի բարեզարդ վիճակու, թե՛ արտաքնապես և թե՛ ներքնապես:

Հայոց Հայրապետը հաստիապես նշում է, որ ս. Սարգսի առաջնորդանիստ եկեղեցին, այս տարի այնուղի կատարվող շինարարական-վերանորոգչական աշխատանքներից մետք կրտսնա մարդարարքի զարդերից մեկը, որպես եկեղեցական կառուց և պատմական հուշարձան:

Հայոց Հայրապետը ապա խոսում է հաջորդ մի քանի տարիների ընթացքում ս. Հովհաննեսի և ս. Չորավոր եկեղեցիներն ու նրանց շրջապատը է՛լ ավելի բարեկարգված ու ավելի ներկայանալի վիճակում տեսնելու իր սրտագին ցանկությամ, հեշտի նաև Արքարատյան թեմում գտնվող տասներես և ավելի այլ եկեղեցիների և վանքերի մետաղ վերանորոգության և բարեկարգության մասին:

Հայոց Հայրապետը շեշտում է, որ եկեղեցական այս վերանորոգչական և բարեզարդման աշխատանքներում մեծ անելիքներ ունեն թեմի հոգևորական, թեմական ու եկեղեցական մարմինները, միասիր և համատեղ գործակցությամբ:

Այնուհետև Հայոց Հայրապետը հայտնում է, որ հայրապետական փոխանորդ տ. Վահան եախիսկուպոս իր կարգադրությամբ գործույղած լինելով Հնդկաստան, հայրապետական փոխանորդի պաշտոնակատար է Եղանակած թեմական խորհրդի ատենադիր տ. Ռուբեն քին. Մարտիրոսյանը, որը կատանձնի վերաբնությունը և դեկանարությունը Արքարատյան թեմի ընթացիկ գործերի, հայրապետական իր անմիջական հսկողության ներքո, մինչև ցնոր տնօրինություն:

Իր հայրապետական խորի ավարտին Վեհափառ Հայրապետը օրինում է Արքարատյան թեմի հոգևորական և աշխարհական ներկայացույցիներին և բարեմայթում նորանոր հաջողություններ նրանց եկեղեցամեր գործունեության նանապարհի վրա:

• • •

Մարտի 17-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի հանդիսության սրաբում, Վեհափառ Հայրապետի բարձր

նախագահության մերը, արթևատագիտության թեկնածու, երածշտագետ Նիկողոս Թահիսիզյանը բովանդակալից դասախոսությունը է կարդում «Ներսես Շնորհալին որպես բանաստեղծ և երաժիշտ» թեմայի շուրջ:

Դասախոսությանը ներկա են լինում տ. Բարգեն արքեպ. Ապատյանը, տ. Կոմիտոս, տ. Հովհիկ եախիսկուպոսները, Մայր Աթոռի միարանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայությանի պաշտոնությունը:

Դասախոսության վերջում շնորհալի երգչուիր Գոհար Գասպարյանը հանդիս է զայլիս Ներսես Շնորհալու երածշտագետ ստեղծագործությանը պատկանող հետևյալ սրանց շարականների սրտագրավ կատարումը.

ա) Պահոց Զ կիրակի կանոնի օրինությունը՝ «Որ զայտիրդ ք գալստեանդ».

բ) Վարդապատի Բ օրվա կանոնի մանկությը՝ «Օրինեցք Մանկունք».

գ) Մնադյան տաղ՝ «Ստեղծող մանկանց».

դ) Հաւոված «Որք զ Քրովքիցն» սրբացությունից՝ «Ալշուիա»:

Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի անդամ, երգիչ Գևորգ Եղիազարյանը ապրումով կատարում է Հովհանն Ուկերերանին և միջրված մանկությը՝ «Որ յանկիզըն ի Հօր»:

Հանդիսության վերջում հոգևոր ճեմարանի տեսուշ տ. Հովհաննես քին. Մարտիրոսնը, հանդիս Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների, սրտագին շնորհակապություն է հայտնում երածշտագետ Նիկողոս Թահիսիզյանին իր այնքան շահեկան և հետաքրքիր դասախոսության համար, և միջրված երգչուիր Գոհար Գասպարյանին ու Գևորգ Եղիազարյանին՝ իրենց այնքան ապրումով և հասկացողությամբ կատարած շարականների երգեցողության համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը երաժշտագետ Ն. Թահիսիզյանի, երգչուիր Գ. Գասպարյանի և երգիչ Գ. Եղիազարյանի և նրանց մեջ զրոյց ունենում հոգևոր երգերի բանաստեղծական և երածշտական-կառարողական բարձր արվեստի մասին:

• • •

Մարտի 18-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսառոշին մերոյ սուկալի շաբաթանացն և մտին ի վիրապն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատոցում նորընծա տ. Հովհանն արդ. Հակոբյանը, իսկ քարոզում է տ. Վահան արդ. Դիլանյանը՝ «Մերոյ լուսառորութեան լուսառոր Վե-

բակացու և նախաշահիղ» (Խորենացի) բնաբանով:

Նոյն օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին այցելություն է տախու Ռուքի համամատ եզրիների կրթապետ Միքր Բագեսինը, որը հյուրաքար գտնվում էր Հայրապետում՝ որպես հյուրը եզրիների համայնքի:

Միքր Բագեսինին ուղեկցում էր Երևանի ուղիղի եզրիներին տրված հաղորդումների բաժնի աշխատակից Մուրազ Խուդոյանը:

Հայոց Հայրապետի և Միքր Բագեսինի միջև տեղի է ունենում շերմ գրուց՝ սրտագին մթնոլորտում:

Մարտի 19-ին, Կիրակի.—Քառասնորդական պահոց (Գալստեան).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քնն. Մարտրյանը, իսկ քարոզում է նորընծա տ. Եղիշեն քնն. Բարյամյանը՝ «Դու ես վէմն և ի վերայ այդր վիմն շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ 48) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյն օրը, ս. պատարագին ներկա գրտերկուց նետո, Հայոց Հայրապետին են այցելում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ելգանի Վահստանցովի անվան թատրոնին առներ Շուկինի անվան թատերական ինստիտուտի ուղարկությունը, պրոֆ. Զահարյա Բորիս Ելգանովիչը իր տիկնոջ՝ Զահարյա Նատալյա Իվանովնայի հետ:

Հարգելի հյուրերին ուղեկցում էին դերասան Լորենց Սոլոշանսկի և բնեմադրիչ Հրաչյա Աշոտյանը:

Հայոց Հայրապետի և արվեստագետների միջև տեղի է ունենում շերմ գրուց՝ հայ և ոռու դասական թատրոնի մի շարք հարցերի շորք:

Մարտի 28-ին, Բինգշարքի.—Այսօր, ժամը 13-ին, Հայոց Հայրապետին են այցելում հյուրաքար Հայաստանում գտնվող՝ Մուսկիստ Հնդկաստանի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Քվիշնառան Շիվառան Շնկվանքարին իր տիկնոջ հետ, և պաշտոնական այլ անձինք:

Հարգելի հյուրերը, այցելելոց հետո Մայր տաճար ու եկեղեցական թանգարան, Վեհափառում գրուց են ունենում Հայոց Հայրապետի մետք շերմ մթնոլորտում:

Մարտի 26-ին, Կիրակի.—Մաղկազարդ.

Օրվա մեծ տոնի սպիտով Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Բարգեն արքեպ. Ասքատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Մաղկազարդի տոնի հոգևոր եկեղեցական ու հայրենափառական մեծ հշանակալության մասին «Են դղրեցա քաղաքն ամենայն» (Մատթ. ԽԱ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը անվանի երգահան Արամ Խաչատրյանի, որին ընկերակցում էին միջազգային մրցույթի դափնեկիրներ Կարինն Գեղրգիանը ու Նիկոլայ Պետրովը, որոնք ներկա էին ներկ Մայր տաճարում ս. պատարագի արարողությանը:

Հայոց Հայրապետի և մեծանուն հայ երգահան Արամ Խաչատրյանի ու մյուս հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում շերմ գրուց՝ սրտագին մթնոլորտում, հայ և ոռու դասական և արդի երաժշտության վերաբերյալ մի շարք նետաքրքրի հարցերի շորք:

Նոյն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվում է «Դուքսացէք»-ի ավանդական կարգը՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Մարտի 27-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, գոմարվում է Գերագույն հոգևոր խորհրդի ներքական նիստը, որին մասնակցում է նաև տ. Բարգեն արքեպ. Ասքատյանը:

Մարտի 28-ին, երեքշաբթի.—Այսօր, Վեհական Հայրապետից և Մայր Արքունից հրաժեշտ առնելով, Բերդութիւն վկայով իր պաշտոնատեղին՝ Արքենսիհան է մեկնում տ. Բարգեն արքեաց. Անպատճամը:

Հանուն Հայոց Հայրապետի Երևանի օդանավակայանում տ. Բարգեն արքեպիսկոպոսին ճամապարհում են տ. Հոսիկ եպս. Սամարդրանը, տ. Գևորգ վլոյ. Անրադարձանը և տ. Մասիս արդ. Գալստյանը:

Մարտի 30-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթերեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր հոգևոր ճեմարանը փակվում է զատկական տոների առիթով:

Օրվա տոնի աղիթով հանդիսավոր և պատարագ է մատուցում Մայր տաճարում տ. Վարդան արդ. Դիլանյանը:

Հավարտ և պատարագի հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը և հաղորդությունն է ստանում:

Ժամը 18-ին աղանդական հանդիսադրյամբ կատարվում է Մայր տաճարում «Լուսոց Ուտքալուսի», վրահայոց թեմի ստացնորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսի հանդիսադրությամբ:

«Ե՛ գիշերի հակումն Ե»:

Հայոց Հայրապետի նախագահությամբ ժամը 19-ին Մայր տաճարում կառարկվում է Հակումի արարողությունը:

«Փառք ի բարձունս»-ից առաջ բարոզում է Վեհական Հայրապետը՝ օրիս խորհրդի փրկագործական, բարոյական ու հոգևոր մեծ հշանակության մասին:

Մարտի 31-ին, ուրբաթ.—Յիշատակ չարշաբնաց և խաչեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Երեկոյան, Վեհական Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Թաղման ավանդական կարգը՝ Մայր տաճարի շուրջ եռադարձ թափորով, ողջ միարանոթյան և ճեմարանի ուսանողության մասնակցությամբ, խուններամ հավատացյալների եւրկայությամբ:

